

Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության հիմնավորումը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում

Գրիգորյան Ն. Հ.

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ավագ գիտնական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ ասպիրանտ (Երևան, Հայաստան)
nkgrigoryan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ խորհրդարանականություն, կառավարման համակարգ, քաղաքական ռեժիմ, ժողովրդավարություն, կոնսոցիատիվիզմ, հասարակություն, լավ կառավարում

Обоснование эффективности системы парламентского правления в контексте консоциальной демократии

Григорян Н. Г.

Старший научный аналитик Национального оборонно-исследовательского университета МО, РА, аспирант НАН РА (Ереван, Армения)
nkgrigoryan@gmail.com

Резюме: В данной статье обсуждаются концептуальные основы осмысленного понимания демократии. В частности, на разных уровнях представлены как цивилизационные и ценностные основы демократии, так и демократия как политический режим, где обсуждается вопрос роли гражданина в институционализации демократии.

В основном изучаются возможности введения и применения консоциативной демократии в условиях парламентаризма. В контексте парламентских демократий представляются сравнительные анализы различных моделей представительских демократий начиная от греческой агоры до наших дней. С точки зрения парламента, как высшего представительского законодательного органа, важны легитимность законодательного процесса и обеспечение отношений между парламентом и обществом, а также вопросы, связанные с культурой парламентаризма.

В конце работы делается ссылка на теоретико-практические положения правильного правления в попытке представить применение консоциативизма в контексте эффективности в системе парламентского правления.

Ключевые слова: парламентаризм, система правления, политический режим, демократия, консоциализм, общество, хорошее управление

Reasoning the Efficiency of the Parliamentary Government System in the Context of Consociational Democracy

Grigoryan N. H.

Senior Research Analyst at National Defense Research University, MOD, RA
PhD Student at NAS RA (Yerevan, Armenia)
nkgrigoryan@gamil.com

Abstract: This article discusses the conceptual basis for a thorough understanding of democracy. In particular, the civilization and value foundations of democracy are presented in separate levels, as well as democracy as a political regime, the role of the citizen in the institutionalization of democracy is discussed.

The possibilities of introducing and practicing consociational democracy under parliamentary government system are mainly explored. In the context of parliamentary democracies, comparative theories of different models of representative democracy have been introduced from Greek Agora up to now. Legislative process and the provision of parliament-society relations and issues related to the political culture of parliamentarism are of paramount importance in terms of the parliament as a supranational legislative body.

To conclude, reference is made to the hands-on principles of good governance in pursuit of presenting the application of conservatism in the context of effectiveness and within the framework of parliamentary system.

Keywords: parliamentarism, system of government, political regime, democracy, consociationalism, society, good governance.

Քաղաքական գործընթացներում զարգացումները ցույց են տալիս, որ կառավարման համակարգի ընտրությունը դեռևս արդյունավետության և բարենպաստ քաղաքականություն իրականացնելու գրավական չէ: Պատահական չէ, որ պետական վարչակարգերի կամ քաղաքական կառավարման համակարգերի հաստատմանը նախորդում է տվյալ համակարգին բնորոշ նախադրյալներ, որոնց հիման վրա երկրները մշակում են լավ կառավարման հայեցակարգեր: Խորհրդարանականության պարագայում այս խնդիրն առավել քան ակներև է՝ կառավարման համակարգը պետք է գուգամիտել խորհրդարանականության մշակույթին: Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելով խորհրդարանական կառավարման համակարգը նպաստում է ինչպես խորհրդարանում, այնպես էլ քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների ներսում բազմակարծության ապահովմանը [1, pp. 23-81]: Անշուշտ, հաշվի առնելով քաղաքական գործընթացներում բոլորի ներգրավման և հասարակության մեջ դժգոհությունների կտրուկ նվազեցման հանգամանքները, պետք է նշել, որ սա լիովին լավ կառավարման մոտեցում է, որն ունի համապատասխան քաղաքական մշակույթ [2, pp. 45-71]: Խորհրդարանական կառավարման համատեքստում կարևորվում է դրա արդյունավետության հիմնավորումը ոչ միայն կառավարման համակարգերի միջև, այլև ժողովրդավարության կոնկրետ տեսության, տվյալ դեպքում կոնսոցիատիվիզմի տեսանկյունից:

Խորհրդարանական կառավարման համակարգի և ժողովրդավարական արժեհամակարգի ընտրությունը, պայմանավորված է տվյալ պետության պատմամշակութային և քաղաքակրթական հարցերով: Ժողովրդավարության և խորհրդարանականության պատմությունը մեկնարկում է անտիկ ժամանակաշրջանից, երբ Հին Հունաստանում և Հռոմում զարգանում էին խորհրդարանական և հանրապետական մշակույթը: Ուստի, պատահական չէ, որ շատերը խոսելով խորհրդարանական ժողովրդավարությունների մասին, առաջին հերթին հղում են անում պատմությանը և քաղաքակրթական ակունքներին: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը իր «Պատմության կերպավորությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան», գրքում դեռևս Արտաշիսյանների արքայատոմի ժամանակաշրջանում խոսում է Հայաստանում առկա ժողովրդավարական սկզբունքների մասին [3, էջ 112-135]: Անշուշտ, այդ ժամանակաշրջանում պետությունները միապետական էին, սակայն այստեղ ոչ թե խոսվում է կառավարման ձևերի, այլ այդ ժամանակաշրջանում նրանց կողմից իրականացված քաղաքականության ժողովրդավարական սկզբունքների մասին:

Ընդհանրապես, երբ խոսում ենք «ժողովրդավարություն» հասկացության մասին պետք է նշել, որ իրականում այն բովանդակում է երկու կարևոր և փոխկապակցված հիմնասյուներ՝ ժողովրդավարությունը որպես մշակույթ և ժողովրդավարությունը որպես ինստիտուտ [4, pp. 187-196]: Ժողովրդավարությունը որպես արժեհամակարգ հնուց մինչ օրս եղել է պետությունների կողմից վարված քաղաքականության հիմքում, սակայն ասել, որ բոլոր պետությունները հնում ունեցել են ընդգծված ժողովրդավարական արժեհամակարգ և, որ ժողովրդավարությունը պետության մեջ ինստիտուցիոնալացված էր, չի արտահայտի հարցի համակողմանի ընկալումը: Այլ բան է, որ ժամանակակից քաղաքական գործընթացներում ժողովրդավարությունը ավելի իրավաքաղաքական բնույթ ունի և պետությունները խորհրդարանի, որպես ժողովրդավարական կարևորագույն ինստիտուտի միջոցով, իրականացնում են պետության քաղաքականության ժողովրդավարական ընթացքը:

Խորհրդարանականության և կոնսոցիատիվիզմի փոխհամադրելիությունը մասնավորապես պայմանավորված է խորհրդարանականությանը բնորոշ ներկայացուցչական գործառույթներով: Խորհրդարանը իր գործունեությամբ հանդիսանում է հանրային խավերի (քաղաքացիական հասարակության) ներկայացուցիչների ամբողջացված ինստիտուտ: Այլ բան է, երբ ներկայացուցչական մակարդակների և դրա արդյունավետության հարցերը խնդրահարույց են: Հենց այստեղ է կարևորվում կոնսոցիատիվ ժողովրդավարության դերը որպես հասարակության բոլոր շերտերի (ստրատանների) միջև իշխանության բաշխման միջոց: Եվ, ըստ հասարակության պատկերի իշխանության բոլոր մարմիններում համամասնորեն ներկայացուցչականության ապահովման քաղաքական գործընթաց [5, pp. 52-67]: Իշխանության կիսման և արդյունավետ կառավարման հարցերը մերօրյա քաղաքական գործընթացներում ժողովրդավարական պետությունների համար կարժես հրամայական է դարձել: Իհարկե միայն հասարակության շրջանում իշխանության բաշխմամբ առկա խնդիրները չեն լուծվում, նաև հարկավոր է քաղաքական ինստիտուտներում կատարել ներկայացուցչական պատվիրակում, որի վառ օրինակներից է՝ խորհրդարանը: Մարդկության պատմությանը հայտնի են խորհրդարանական ժողովրդավարության այնպիսի օրինակներ, ինչպես հունական Ագորան էր, երբ հասարակության տարբեր հատվածները որոշումների կայացման գործընթացին մասնակցելու համար ներկայացուցչական մակարդակում պատվիրակվում էին քաղաքի կենտրոնում գտնվող ժողով [6, pp. 40-52]: Իհարկե հարց է առաջանում թե

ինչպես կարող է իշխանության կիսումը նպաստել հասարակության բոլորի շերտերի շահերի բավարարմանը և արդյո՞ք դժգոհողներ կամ արհամարվածներ չեն լինում: Պատասխանելով այս հարցադրմանը նշենք, որ իհարկե նման դրսևորումը մասնավոր դեպքերում չի բացառվում, բայց նաև սխալ կլինի համարել, որ նման բացասական փորձը կիրառելի է բոլոր քաղաքականացված ստրատաների դեպքում: Ուստի, կարծում ենք, որ դա քիչ հավանական է, քանի որ կոնսոցիատիվիզմի բուն նպատակը պետական կառավարման և որոշումների կայացման գործընթացում բոլորի ներգրավումն է, այլ ոչ թե բաժանարար գծերի խորացումը:

Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության տեսնակյունից կարևոր գործոն է օրենսդրական գործընթացի լեգիտիմացումը և ներկայացուցչականության մակարդակի բարձրացումը [7, pp. 203-215]: Խնդիրը քննարկվում է երկու մակարդակներում: Նախ՝ ներկայացվում է օրենսդիր իշխանության որպես բարձրագույն օրենսդիր մարմնի լեգիտիմության հարցը: Այնուհետև խորհրդարանում բուն օրենսդրական գործունեության իրականացման լեգիտիմությունը, թե որքանով են ընդունված օրենսդրական ակտերը պատկանապատ: Խոսելով բարձրագույն օրենսդիր մարմնի լեգիտիմությունից կարևոր է հասկանալ, որ խնդիրը միայն ընտրական գործընթացների արդյունքում ազատ, արդար և թափանցիկ ընտրված իշխանություն կամ ընդդիմություն ունենալը չէ [7, p. 226-228]: Խնդիրները ավելի արմատական է և կարիք կա մասնագիտական լուրջ հետազոտությունների: Միևնույն ժամանակ, լեգիտիմության հարցը կարևոր է հասկանալու, թե որքանով է օրենսդիր մարմնում պատգամավորների մանդատ զբաղեցնելը արտահայտում հասարակության սեզմենտային կամաարտահայտության պատկերը: Ահա այստեղ է, որ կարևորվում են կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության փոխահամադրելիությունը, որպես արդյունավետ պետական կառավարման և որոշումների կայացման միջոց: Մասնավորապես, էական է կոնսոցիատիվիզմի մեծ կոալիցիայի և համամասնության սկզբունքները, որոնք խորհրդարանում համամասնության սկզբունքով նախատեսում են բոլոր պաշտոններում հասարակության շերտերի ներկայացվածություն: Սա զուտ սոցիալական արդարության խնդիր չէ: Այստեղ կարևոր գործոն կարող է լինել բարձրագույն օրենսդիր մարմնում սեփական ապագան տնօրինելու նպատակով որոշումների կայացման գործընթացին չմասնակցելը և հասարակության շերտերին օտարելը [8, pp. 73-75]: Ուստի, կարող ենք ասել, որ օրենսդրական գործընթացի լեգիտիմացումը և արդյունավետությունը բավականին բարդ

գործընթաց է, որը նախատեսում է վերոնշյալ երկու հայեցակետերի փոխահամադրելիություն:

Խորհրդարանական կառավարման արդյունավետության հաջորդ խնդիրը խորհրդարանականության մշակույթի և կուսակցական համակարգի կայացումն է [9, pp. 107-136]: Կայացած կուսակցական համակարգը բնորոշ է կառավարման բոլոր համակարգերին, սակայն երբ խոսում ենք խորհրդարանականության մասին, պետք է նկատի ունենալ, որ այստեղ անհատների գործոնը, ի տարբերություն նախորդ երկու կառավարման համակարգերի համարավորինս նվազեցված է: Եթե նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերում կուսակցական համակարգը կարող է թերանալ, ապա խորհրդարանականի դեպքում այդ բացը լուրջ խնդիր է լավ կառավարման դիտանկյունից: Կուսակցական համակարգի չկայացվածության բնորոշիչներից են՝ կուսակցության ինստիտուցիոնալացված չլինելը, ներկուսակցական համակարգում որոշումների միանձնյա ընդունումը, կուսակցական գաղափարախոսության բացակայությունը և այլն: 2018 թվականին անցում կատարելով խորհրդարանական կառավարման համակարգի, Հայաստանում մինչ օրս լուծված չէ կուսակցական համակարգի կայացվածության և խորհրդարանականության մշակույթի խնդիրները: Այսօր մեզանում շատ են միապետական գործելաճ և քաղաքական գաղափարախոսություն չունեցող կուսակցությունները, որոնք քաղաքական որոշումներ են կայացնում, ելնելով նեղ անձնական շահերից: Նման կուսակցությունները հիմնականում սերում են բիզնես առաջնորդների շահերից և բովանդակությամբ նման են բիզնես նախագծերին: Կայացած կուսակցական համակարգերի դեպքում նախատեսվում է ինստիտուցիոնալացված կուսակցությունների առակայություն [10, էջ 134-143]: Մասնավորապես, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեպքում մենք գործ ունենք կայացած երկկուսակցական համակարգի հետ: Օրինակ՝ ԱՄՆ-ի դեպքում, բազմաթիվ մեծահարուստներ, ինչպիսին՝ Դոնալդ Թրամփն է, երկրի նախագահ կամ պատասխանատու այլ պաշտոններ են զբաղեցնում կուսակցության միջոցով, այլ ոչ թե սեփական շահերի համար ստեղծում են կուսակցություններ և երբ ցանկանում լուծարում են դրանք: Սա փաստում է այն մասին, որ ԱՄՆ-ում կուսակցական համակարգը կայացած է և թե՞ հանրապետական և թե՞ դեմոկրատական կուսակցությունները քաղաքական գործընթացների մասնակցության առումով կարևոր դերակատարություն ունեն: Կայացած խորհրդարանականության մշակույթը առանցքային նշանակություն ունի պետական կառավարման գործընթացում [11,

pp. 22-33]: Հարց է առաջանում, եթե պետությունը նոր է անցում կատարել խորհրդարանականության ինպես կարող է ունենալ կայացած խորհրդարանականության մշակույթ: Լիովին կիսելով այդ մտտեցումները միաժամանակ նշենք, որ երկրի նախագահական կամ կիսանախագահական կառավարման նախորդումը չի նշանակում, որ պետությունը չունի խորհրդարանի մշակույթ: Ավելին կայացած խորհրդարանի մշակույթը կարևոր նախադրյալ է համարվում խորհրդարանականության մշակույթ ձևավորելու գործում: Օրինակ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության խորհրդարանականության պայմաններում համապատասխան մշակույթի ձևավորման գործընթացին կարող են նպաստել Հայաստանի շուրջ 100-ամյա խորհրդարանական մշակույթի փորձը: Ընդհանրանցելով նշենք, որ թե՞ կուսակցական համակարգի և թե՞ խորհրդարանականության մշակույթի առկայությունն ու փոխհամադրելիությունը ապահովում են խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը:

Խորհրդարանականության համատեքստում, թերևս, ամենաէական հարցերից մեկն արդյունավետ կամ լավ կառավարման (good governance) հիմնախնդիրն է: Խորհրդարանական կառավարման համակարգում լավ կառավարում ասելով առաջին հերթին պետք է հասկանալ խորհրդարանի՝ որպես ժողովրդավարական հիմնական ինստիտուտի արդյունավետությունը: Լավ կառավարման գաղափարը ընկած է կառավարությունների և կառավարման մարմինների պատասխանատվության հիմքում, որն էլ ուղղված է մարդկային զանգվածների և դրանց ներսում սոցիալական շերտերի, խմբերի կարիքների բավարարմանը: «Լավ կառավարումն անորոշ հասկացություն է, որը հիմնականում վերաբերվում է պետական ինստիտուտների (տվյալ դեպքում խորհրդարանին) և հանրային միջոցների կառավարմանը» [12, pp. 525-548]: Կառավարումը որոշումների կայացման և իրականացման գործընթաց է: Բսկ կառավարման ոլորտները կարող են ընդգրկել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարաբերությունների ոլորտը [13, c. 240-248]: Լավ կառավարումը հնարավոր է միայն արհեստավարժ և կիրթ անձնակազմի ներգրավմամբ [14, p. 48]: Լավ կառավարումը խորհրդարանական կառավարման համակարգում ունի մի շարք առանձնահատկություններ: Դասական առումով խորհրդարանի դերը եղել է հին օրենքները բարեփոխելը և նոր օրենքներ ընդունելը: Ուստի խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում կարևորվում են 1. արդյունավետ և արդար օրենքներ ստեղծելու փորձը, 2. պետական կարևոր հարցերի լուծման նպատակով գործադիր

մարմնի (կառավարության) հետ աշխատելու ունակությունը: Շատ օրենքներ գրվում, մշակվում և ներկայացվում են կառավարության ոլորտային գերատեսչությունների կողմից: Անդրադառնալով խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիր մարմնի արդյունավետ գործունեությանը՝ կարող ենք վստահաբար ասել, որ այստեղ հիմնական պայմանը հնարավորինս թափանցիկ գործելն է, ինչն իր հերթին նախատեսում է անարդյունավետ գործելատնից հրաժարում [15, pp. 511-518]:

Խորհրդարան-հասարակություն փոխգործակցությունն լավ կառավարման և խորհրդարանականության մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Խորհրդարանականության արդյունավետության հիմնական դրսևորումներից կարող է լինել հասարակության բոլոր շերտերի ակտիվ ներգրավվածությունը խորհրդարանական կառավարման գործընթացներին և նրանց խնդիրների արագ և արդարացի սկզբունքով լուծումը: Առկա խնդիրների լուծման և արդյունավետ խորհրդարանական կառավարում իրականացնելու նպատակով շատ կարևոր են նաև խորհրդարանի ինստիտուցիոնալացումը, որը նախատեսում է հանձնաժողովների, մասնագիտացված խմբերի, խորհրդարանական լուծումների և անհրաժեշտության դեպքում նաև իրավասու աշխատանքների իրականացում: Խորհրդարանականության պայմաններում լավ կառավարման գործընթացին էական նպաստում է հաշվետվողականությունը: Դա թափանցիկության և ապագայում խնդիրների կանխման արդյունավետ միջոց է: Լավ կառավարման նպատակով օրենսդիր մարմնում ձևավորվող հանձնաժողովները (կամ հատուկ մարմինները) նպատակաուղղված են քննարկումներով պարզելու 1. կառավարության օրինագծերը, 2. ուսումնասիրել և պարզել, թե ինչպես է կառավարությունը տնօրինում պետական բյուջեն և անհրաժեշտության դեպքում պահանջել, որպեսզի ներկայացնի արդար և թափանցիկ հաշվետվություն: Եվ, վերջապես, արդյունավետ խորհրդարանական կառավարման գործում էական գործոն է միջխորհրդարանական համագործակցությունը և խորհրդարանական դիվանագիտության իրականացումը:

Արդյունավետ խորհրդարանական կառավարման մարտահրավերները բազմաթիվ են, սակայն փորձենք անդրադառնալ դրանցից կարևորներին:

- Սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով անհրաժեշտ օրենսդրական պայմանների ստեղծում և կառավարության գործունեության վերահսկողություն:
- Մարդու իրավունքների պաշտպանության նպատակով խորհրդարանի գործունեու-

թյան հաշվետվողականություն և թափանցիկություն:

- Ռեսուրսների և կարողությունների բացակայություն, որը թույլ չի տալիս օրենսդիրն գործադիրի նմանությամբ իրական իշխանություն իրականացնել:

- Իշխանության միասնականություն: Սա նախատեսում է էլիտա-ժողովուրդ հարաբերությունների մակարդակի ստուգում, քանի որ հաճախ ժողովրդի կողմից ընտրված պաշտոնյաները, և նրանց կողմից կայացված որոշումները չեն արտահայտում հասարակության կամքը և շահերը:

- Խորհրդարանը, լինելով ժողովրդավարական ինստիտուտ և ներկայացնելով հասարակության կամքը, պետք է ամեն ինչ անի, որ հասարակության սպասելիքներն արդարանան, հակառակ դեպքում կարող են տարաբնույթ արհավիրքներ լինել:

Հատկանշական են նաև լավ կառավարման վերաբերյալ գիտահետազոտական մոտեցումներն: Ըստ գիտնական Մեմ Ագերաջիի՝ լավ կառավարման վերաբերյալ տրված ոչ հստակ սահմանումն այն հարցի շուրջ, թե ի՞նչն է ընդգրկում կառավարման համակարգը, օգտատիրոջը թույլ է տալիս սահմանել իր սեփական պարամետրերը: Իսկ համահեղինակ հետազոտողներ Եվա Պոլուխայի և Մոնա Ռոզենդալի «Վիճարկելով լավ կառավարումը» գրքում, որտեղ ներկայացված դրույթներն արևմտյան ժողովրդավարությունների համար չափանիշներ են, սահմանված են երկրների միջև մրցակցության իրականացման հիմնական ստանդարտներն ու օրինակները [16, pp. 237-270]: Օգտագործելով քաղաքական մարդաբանության մեթոդները՝ նրանք եզրակացնում են, որ որոշումների ընդունման գործընթացում, կիրառելով լավ կառավարման սկզբունքը, այն անկախ դեկլարարի կառավարման մոտեցումներից միջազգային հարաբերություններում կարող է առաջացնել մշակութային հիմքով տարատես (heterogeneous) չափանիշների բախումներ: Հետաքրքրական է հնդիկ պրոֆեսոր, սոցիոլոգ Մուրենդա Մունշիի (1922-2013) «Խելացի մարդուն լավ կառավարման» ուղեցույցը, որն անդրադառնում է լավ կառավարման առեղծվածին: Այստեղ նա նշում է, որ շատերը ձանձրանալով «լավ կառավարումից» կամ չցանկանալով հասկանալ աշխարհում դրա գոյությունը թողնում հեռանում են մեր իրականությունից և փնտրում է այլ ուղիներ: Նա իր գրքում անդրադառնում է նաև լավ կառավարման նպատակներին, ներկայացնելով, թե ինչպես են դրանք ծառայում հասարակությունում: Իսկ ֆրանսիացի սոցիոլոգ Մայքլ Կրոզիեն ներկայացնելով կառավարման համակարգի վերաբերյալ իր հայացքները իր

հոդվածում քննարկում և վերլուծում է կապի համակարգում մի շարք ակտիվ փոփոխություններ և դրանց ազդեցությունը կառավարման գործընթացի վրա: Սա նրան հնարավորություն է տալիս տարբեր դիտանկյուններից տեսնելու թե ինչ է իրենից ներկայացնում ժամանակակից կառավարումը: Արդյունքում Կրոզիեն մտահանգում է նրան, որ երբ հասարակությունում կառավարումը և քաղաքականությունը իրականացվում են լայնախոհ մոտեցումներով, դրանք մշտապես օրեցօր փոփոխվում են [17] :

Օգտագործված գրականության ցանկ

1. **Palonen K., Rosales J.**, The Politics of Dissensus: Parliament in Debate, Cantabrina University Press, 2014.
2. **Brunclik M., Kubat M.**, Semi-presidentialism, Parliamentarism and Presidents: Presidential Politics in Central Europe, Routledge, 2018.
3. **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, Սարգիս Խաչենց. - Երևան. Փինթինֆո:
4. **Held D.**, Models of Democracy, Stanford University Press, California, 2006.
5. **Bogaards M.**, Democracy and Social Peace in Divided Societies, Palgrave Macmillan, London.
6. **Inozemtsev V., Dutkiewicz P.**, Democracy Versus Modernization: A Dilemma for Russia and for the World, Routledge, London, 2013.
7. **Grigsby E.**, Analyzing Politics: An Introduction to Political Science, WADSWORTH CENGAGE Learning, 2009.
8. **Stone D.**, Policy Paradox: The Art of Political Decision Making, W.W. Norton, 2001.
9. **Sartori G.**, Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR press, 2005.
10. **Քեռյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Վան Արյան հրատ., Երևան, 2002:
11. **Schmitt C.**, The Crisis of Parliamentary Democracy, The MIT press, Massachusetts, 1988.
12. **Grindle M.**, Good Enough Governance: Poverty Reduction and Reform in Developing Countries, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, 17 (4), 2004.
13. **Ланцова С., Ачкасова В.**, Мировая Политика и Международные Отношения, ПИТЕР, Москва, 2005.
14. **Dimond L.**, Three Paradoxes of Democracy, II journal of democracy, Vol. 1, No 3, 1990.
15. **Rotberg R.**, Good Governance Means Performance and Results, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, 27 (3), 2014.
16. **Poluha E., Rosendahl M.**, Contesting “Good” Governance: Crosscultural Perspectives on Representation, Accountability and Public Space, Routledge, 2002.
17. **Crozier M.**, Rethinking Systems: Configurations of Politics and Policy in Contemporary Governance, <http://journals.sagepub.com/doi/10.1177/0095399710377443>, (13.10.2018).

Տճան/Հանձնվել է՝ 21.02.2020
 Рецензирована/Չրախոսվել է՝ 27.02.2020
 Принята/Ընդունվել է՝ 29.02.2020